ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1

ք.Երևան «01» 07 2024թ.

Վարչապետի աշխատակազմը, ի դեմս վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Գարիկ Բոշյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռուդիկ Տեր-Գալստյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է «Մեր ժամանակների հերոսը» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն այունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասը աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 150 000 000 (մեկ հարյուր հիսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Վարչապետի աշխատակազմ	«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ
Ք.Երևան, Հանրապետության հր.,	ք. Երևան, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Կառավարական տուն 1	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1660004718200100
Հ/Հ 900011053502	ՀՎՀՀ 00167818
ՀՎՀՀ 02505554	
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«01» 07 2024թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Չափ-ման միա-վորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	79951100/3	«Մեր ժամանակների հերոսը» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման ծառայություններ համաձայն հավելվածներ 1.1-ի և 1.2-ի	դրամ	150 000 000	1	ՀՀ, ք, Երևան, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիր	2024թ դեկտեմբեր, ըստ պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր-հայտի:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Հանրապետության հր.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011053502
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1.1
«01» 07 2024թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

«Մեր ժամանակների հերոսը» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման ծառայությունների

«Մեր ժամանակների հերոսը» ամենամյա մրցանակաբաշխության կազմակերպման ծառայությունների մատուցում.

- Միջոցառման ընթացքում համերգային ծրագրով ուղեկցվող մրցանակաբաշխության միջոցով մեծարանքի արժանացնել և խրախուսական մրցանակներ շնորհել ՀՀ քաղաքացիների, ովքեր ստեղծել են բիզնես կամ կրթական հարթակներ, որոնք ունեցել են հաջողություն և կամ կենսունակ են: Մրցանակաբաշխության էությունը «Եվ այդ մեկ մարդը Դու՛ ես» գաղափարի գործնական արտահայտումն է տնտեսվարման և կրթության ոլորտներում:
- Հասարակության լայն շերտերին հասցնել այն միտքը, ըստ որի մարդը ոչ թե որևէ այլ մեկից է աշխատատեղ կամ ապրելու միջոց ակնկալում, այլ ինքն է ստեղծում այդ աշխատատեղը և ապրելու միջոցը, հմտությունը՝ ոչ միայն իր, այլև ուրիշների համար, ինչպես նաև հարկեր է վճարում:

Միջոցառումն անցկացվելու է 2024 թվականի դեկտեմբեր ամսին, ըստ Պատվիրատուի կողմից ներկայացված պատվեր հայտի, Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում, տևելու է մոտ 2 ժամ և նախատեսված է լինելու առավելագույնը 1200 անձի համար:

Միջոցառման տարածքը կբաժանվի զոնաների:

Միջոցառումը տեսանկարահանվելու և եթեր է հեռարձակվելու Հանրային հեռուստաընկերության կողմից 2025 թվականի հունվարի 1-ին:

Նախամուտք

Նախամուտքի մոտ զուգահեռ շարքով տեղադրված կլինեն ԼԷԴ սյուներ, որոնք կցուցադրեն թեմատիկ բովանդակություն, որը կներառի միջոցառման քրոնիկոնն ու բրենդային տարրերը:

Նախասրահ

Նախասրահի աջ և ձախ կողմերում գտնվող հանդերձարանները կլինեն քողարկված, ելնելով եղանակային պայմաններից:

Նախասրահի կենտրոնում տեղադրված կլինի «Մեր Ժամանակների Հերոսը» մրցանակաբաշխության խորհրդանիշի մեծ ինստալյացիան:

Դեպի երկրորդ հարկ տանող աստիճանների հատվածը նույնպես կլինի քողարկված, նախասրահը վերածելով գրեթե անճանաչելի փորձարարական տարածքի:

Նախասրահը կծառայի որպես հյուրերի հավաքատեղի: Նախասրահում տեղադրված կլինեն բազմաթիվ հայելապատ ինստալյացիաներ, որոնք հյուրերին կփոխանցեն միջոցառման կենտրոնական միտքը. այն է՝ նրանցից յուրաքանչյուրը կարող է լինել հերոս:

Միջոցառման ավարտից հետո նախասրահը կձևափոխվի 1200 անձի համար նախատեսված հյուրասիրության զոնայի: Հյուրասիրությունը ներառում է մրգի տեսականի, թխվածք, թեյ, սուրճ, շաքարավազ, զովացուցիչ ըմպելիքներ: Այստեղ կփոխվի լուսավորությունն ու սրահի տարրերի դասավորությունը, ստեղծելով ավելի անմիջական և թեթև միջավայր:

Համերգային դահլիճ

Դեպի համերգային դահլիճ տանող տարածքը կլինի լիովին բրենդավորված: Գլխավոր մուտքի հատվածում տեղադրված կլինի ընդարձակ ֆոտոզոնա:

Բեմի կոնցեպտ

Բեմը կլինի շրջանաձև, առավել տեսանելի ու տպավորիչ թե՛ ֆիզիկապես ներկա գտվողների և թե՛ հեռուստադիտողների համար: Կենտրոնական հատվածում այն կունենա մեծ ԼԷԴ էկրան, որի վրա միջոցառման մրցանակի անիմացիային զուգահեռ՝ ըստ իրավիճակի, կցուցադրվի համապատասխան կոնտենտ: ԼԷԴ էկրանը հնարավորություն կունենա ըստ անհրաժեշտության բարձրանալու և իջնելու:

Բեմի շրջանաձև ԼԷԴ էկրանների վրա ցուցադրվող կոնտենտը կլինի դինամիկ, կատարելով երկակի ֆունկցիա՝ ըստ իրավիճակի լինելով կամ դեկորատիվ, կամ ինֆորմացիոն:

Ետնամասում կլինի նվագախումբը, իսկ բեմի երկու թևերը կծառայեն տարբեր բեմադրական լուծումների համար: Բեմի դիզայնը համադրում է գերժամանակակից ճարտարապետական լուծումները դասական ոճի հետ:

Բեմադրական մասը կազմակերպված կլինի այնպես, որ լինի գրավիչ և դիտարժան նաև Հանրային հեռուստաընկերության եթերով միջոցառմանը հետևող հեռուստադիտողներին: Բեմի լուսավորման մեջ կօգտագործվեն նաև պրոեկցիայի տարրեր:

Գեղարվեստական մաս

Համերգային ծրագիրը կազմակերպվում է հետևալ ձևաչափով՝ մեկ երաժշտական կատարում, ապա 3 մրցանակի հանձնում:

Հիմնական ծրագրի մեկնարկը կտրվի նախապես պատրաստված տեսանյութ-քրոնիկոնով, որը կարճ կներկայացնի նախորդ տարիների հերոսներին: Տեսանյութը կամփոփվի ջահերթ հիշեցնող արարողությամբ, որի ընթացքում հերոսները դեպի բեմ կփոխանցեն այն մասնիկները, որոնցից կհավաքվի ԼԷԴ-ի մեծ մրցանակը: Այս ամենից հետո ԼԷԴ էկրանը կբարձրանա, և նախորդ տարիների հերոսների երգչախումբը կկատարի ՀՀ հիմնը:

Այս տարի լրանում է Շառլ Ազնավուրի և Սերգեյ Փարաջանովի հարյուրամյա հոբելյանը, ինչպես նաև Երվանդ Քոչարի 125-ամյակը: Ելնելով այս փաստից, ծրագրում կարևոր տեղ կհատկացվի նրանց ստեղծագործություններին:

Բեմադրության ընթացքում բեմի վրա կհայտնվի աստվածուհի Անահիտի հանրահայտ բրոնզե կիսանդրիի խոշոր նմանակը, որը կծառայի որպես անմոռանալի կտավ՝ միջոցառման պրոյեկիոն հատվածի համար:

Մրցանակաբաշխության ծրագրում կներառվի սիմֆոնիկ նվագախումբը, ինչպես նաև օպերային թատրոնի մենակատարներ, պարարվեստի նշանառու ներկայացուցիչներ, ժամանակակից էստրադային և ժողովրդական ժանրի կատարողներ, որոնց ցանկը կքննարկվի և կհաստատվի պատվիրատուի կողմից:

Նախատեսված են նաև դասական և ժողովրդական երգերի արդի մշակումներով կատարումներ՝ նախատեսված տարբեր թիրախային լսարանների համար:

Ծրագրում կներառվեն բոլոր պարգևատրվող հերոսների մասին նախապես պատրաստված 13 հոլովակներ, որոնք կցուցադրեն յուրաքանչյուրի պարգևատրումից առաջ:

Միջոցառման ընդհանուր հայեցակարգը մշակութային և ժամանակային խաչմերուկ կլինի, որը կհամադրի անցյալն ու ներկան, հինն ու նորը, հայտնին և անհայտը՝ ճանապարհ ցույց տալով դեպի մեր երկրի լուսավոր ապագան:

Արարողության շրջանակում կապահովվի նաև միջոցառման մասնակիցների, հյուրերի, ադմինիստրատիվ, ստեղծագործական և տեխնիկական անձնակազմի համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ լոգիստիկ, արարողակարգային, տեխնիկական և սպասարկման հարմարությունները:

Մրցանակը բեմ բերող մոդելի (մաժոր դոմի) հանդերձանքը կլինի կոնցեպտուալ և կմիավորի միջոցառման բրենդինգի գույները:

Միջոցառման կոնցեպտը ներառում է գեղարվեստական լուծումներ ու պետության խորհրդանիշներ:

Միջոցառման բովանդակային հաջորդականությունը կտրամադրվի Պատվիրատուի կողմից:

Միջոցառման շրջանակներում օգտագործվող սարքերը, սարքավորումները (տեխնիկական սարքավորումները, բեմական կոնստրուկցիաները, լեդ էկրանները, գույքը և այլն) և օգտագործվող սարքերի և սարքավորումների բնութագրիչները (պարամետրերը)

Միջոցառման շրջանակներում կօգտագործվեն անհրաժեշտ քանակի և պատշաճ որակի տեխնիկական սարքեր, սարքավորումներ (LED էկրաններ, ձայնային և լուսային համակարգեր և այլն), որոնք կբավարարեն համերգային ծրագրի և մրցանակաբաշխության կազմակերպման պահանջներին: Մասնավորապես.

ՀՀ	Անվանում	Քանակ
1	Լեդ էկրան	
1.1	Լեդ էկրան 2.6mm	124
1.2	Լեդ էկրան 4.8mm	90
1.3	Լեդ էկրանների կառավարման համակարգ	1
2	Ձայն	
2.1	Ձայնային համակարգ Fidek FMS115՝ նախատեսված հաղորդավարների և երաժիշտների համար:	24
2.2	Ձայնային համակարգ Fidek FRS115՝ նախատեսված մուտքից մինչև տաչարի դիմացը, ֆոնային երաժշտություն ապահովելու համար:	8
2.3	Խոսափող՝նախատեսված լարային գործիքների համար Remic:	54
2.4	Խոսափող՝ նախատեսված փողային, փայտափողային գործիքների համար DPA 4099:	11
2.5	Խոսափող հարվածային գործիքների համար Neumann KM184:	24
2.6	Խոսափող վոկալի համր, Shure beta SM58:	12
2.7	Բարձրախոս՝ նախատեսված Բաս և Սոլո կիթառների համար	2
2.8	Ձայնի կառավարման համակարգ Alen&Heat Dlive S500, 128 մուտք	1
3	Լույս	
3.1	Լեդ լուսատու սարք FineArt Fine 2000L BSWF, նախատեսված նկարահանման համար դիմային լույս ստանալու համար:	42
3.2	Լուսատու սարք FineArt 450 Beam, նախատեսված է երկնքում ճառագայթներ ստանալու համար:	48
3.3	Լուսատու սարք Light Sky Pearl Wash, նախատեսված է ճառագայթներ ստանալու համար:	64

3.4	Լուսատու սարք FineArt Fine 1200C Strobe, նախատեսված գունային լուծումների համար:	64
3.5	Լույսերի կառավարման համակրգ Malighting MA2 Full size	1
3.6	Լույսերի կառավարման համակարգ MAlighting MA2 NPU	2
3.7	PR lighting led bar rgbw	60
3.8	Լեդ լուսատու սարք 1m, 64 pixels rgb	350
3.9	Madrix control լուսատուների կառավարման համակարգ:	1
4	Ալյումինե կոնստրուկցիա և էլ. Ամբարձիչներ	
4.1	Ալյումինե կոնստրուկցիա 40*40, նախատեսված լեդերի և լույսերի ամրացման համար:	82
4.2	Էլ ամբարձիչներ 1տ, 1բ/4մ, նախատեսված լեդ էկրանների լույսերի և ձայնային համակարգերի տեղադրման համար:	16
4.3	Շխթայաձողեր 1Տոննա	26
5	TV monitors (reminder)	2

Իրականացվելու է լեդ էկրանների գրաֆիկական մոնտաժ, ինչպես նաև ապահովվելու է լազերային շոու ծրագիր: Միջոցառման համերգային հատվածում նախատեսվում է ***հատուկ էֆեկտների*** օգտագործումը՝ միջոցառման կոնցեպտին (սցենարին) համապատասխան:

Ոճաբանական, տպագրական և այլ ծառայություն

Միջոցառման շրջանակներում իրականացվելու են հաղորդավարների, արտիստների հագուստների մոդելավորում և պատրաստում, բաներների դիզայն և տպագրություն, 1000 անձի համար նախատեսված հրավիրատոմսերի տպագրություն, բեյջերի տպագրություն՝ 100 անձի համար, մրցանակների պատրաստում՝ 13 անձի համար: Մրցանակի դիզայնը համաձայնեցվելու է Պատվիրատուի հետ:

Թարգմանչական ծառայություն

Անհրաժեշտության դեպքում՝ թարգմանչական խցիկների, դրանց գործարկման համար անհրաժեշտ սարքավորումների տեղադրում և սպասարկում:

Թարգմանչական ականջակալների ապահովում՝ առնվազն 50 անձի համար, բարձր որակի ականջակալներ:

Համաժամանակյա թարգմանության ապահովում՝ հայերենից անգլերեն:

Պայմանագրի կատարման համար պահանջվում են հետևյալ աշխատանքային ռեսուրսները

Ստեղծագործական տնօրեն /Creative director/, բեմադրող ռեժիսոր, սցենարիստ, երաժշտական պրոդյուսեր, 2 հաղորդավար, միջոցառման գլխավոր ձայն, ոճաբանական թիմ:

Միջոցառման շրջանակներում ներգրավվելու են նաև այլ աշխատանքային ռեսուրսներ՝ վարսահարդարներ, դիմահարդարներ, բանվորական ուժ, բեմի լրացուցիչ մաքրուհիներ, տեխնիկական և սպասարկման անձնակազմ, հետնաբեմի հատվածում՝ անվտանգության աշխատակիցներ:

Միջոցառման անցկացման շրջանակներում անհրաժեշտ այլ ծառայությունների մատուցում

Միջոցառման անցկացման ընթացքում, ինչպես նաև դրա ավարտից հետո հիմնական տարածքի մաքրության ապահովում:

Միջոցառման անցկացման շրջանակներում պահնորդական /անվտանգության/ ծառայությունների ապահովում:

Տեխնիկական սպասարկման ապահովում:

Մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում՝ ներառյալ անհրաժեշտ բանվորական ծառայությունները:

Միջոցառման անցկացման շրջանակներում առնվազն 10 հյուրընկալների ապահովում:

Միջոցառման տարածքում մեքենաների անխոչընդոտ երթևեկության և կայանման ապահովում:

Հավելում՝

Միջոցառման շրջանակներում բոլոր ծառայությունները նախապես համաձայնեցվում են պատվիրատուի հետ:

Որոշ ծառայություններ կարող են չեղարկվել կամ խմբագրվել, ողջամիտ ժամկետներում՝ կատարողին նախապես տեղեկացնելով:

Տեխնիկական ապահովումը, ձևավորումը, կահավորումն ու լուսավորումը պետք է համապատասխանի միջոցառման անցկացման շրջանակներում նախատեսվող տարածքի և հարակից տարածքների չափսերին:

Միջոցառման ընթացքում սանիտարական նորմերի և անվտանգության բոլոր կանոնների ապահովում:

Միջոցառման ավարտից հետո Կատարողը Պատվիրատուին ներկայացնում է հաշվետվություն մատուցված ծառայությունների վերաբերյալ՝ կցելով կատարված ծախսերի վերաբերյալ բոլոր փաստաթղթերը՝ ըստ նշյալ առանձին ծառայությունների:

Վճարումներն իրականացվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն գնային առաջարկի բացվածքի (Հավելված 1.2):

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**ԿԱՏԱՐՈՂ**
Վարչապետի աշխատակազմ	«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ
Ք.Երևան, Հանրապետության հր.,	ք. Երևան, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
Կառավարական տուն 1	«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Հ/Հ 1660004718200100
Հ/Հ 900011053502	ՀՎՀՀ 00167818
ՀՎՀՀ 02505554	
(ստորագրություն) Կ.Տ.	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1.2
«01» 07 2024թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1 ծածկագրով պայմանագրի

Գնային առաջարկի բացվածքի

ՀՀ	Ծառայության անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի գին	Գումար
1	*2*	*3*	*4*	*5*	*6=4*5*
1	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի տարածքի ձնավորում	Դրամ	1	2 500 000	2 500 000
2	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի նախամուտքի կահավորում	Դրամ	1	4 200 000	4 200 000
3	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի նախասրահի կահավորում	Դրամ	1	6 650 000	6 650 000
4	Հյուրասիրություն /1200 անձի համար/	Դրամ	1	6 000 000	6 000 000
5	Ընդհանուր բեմահարթակի կահավորում	Դրամ	1	16 665 000	16 665 000
6	Ետնաբեմի և հանդերձարանների կահավորում	Դրամ	1	1 000 000	1 000 000
7	Ամբողջական տեխնիկական հագեցվածություն	Դրամ	1	25 600 000	25 600 000
8	Տեսանյութերի և անիմացիոն նյութերի պատրաստում	Դրամ	1	5 000 000	5 000 000
9	LED ու պրոյեկցիոն կոնտենտի ապահովում	Դրամ	1	2 500 000	2 500 000
10	Պրոյեկցիայի տեխնիկական ապահովում	Դրամ	1	1 000 000	1 000 000
11	Բեմական հագուստների մոդելավորում և պատրաստում, այդ թվում՝				3 800 000
11.1	Թվով 2 հաղորդավարների հագուստի մոդելավորում և պատրաստում	Դրամ	1	300 000	300 000
11.2	Պարային խմբի հագուստի մոդելավորում և պատրաստում	Դրամ	1	3 000 000	3 000 000
11.3	Հյուրընկալների հագուստի մոդելավորում և պատրաստում	Դրամ	1	500 000	500 000
12	Ստեղծագործական և ադմինիստրատիվ անձնակազմի ապահովում, այդ թվում				13 750 000
12.1	Բեմադրող ռեժիսոր	Դրամ	1	3 000 000	3 000 000
12.2	Բեմադրող ռեժիսորի օգնական	Դրամ	1	400 000	400 000
12.3	Երաժշտական պրոդյուսեր	Դրամ	1	1 500 000	1 500 000
12.4	Միջոցառման գլխավոր (հետկադրային) ձայն	Դրամ	1	250 000	250 000
12.5	Սցենարի հեղինակ	Դրամ	1	700 000	700 000
12.6	Թվով 2 հաղորդավարներ	Դրամ	1	2 000 000	2 000 000
12.7	Բեմադրող նկարիչ	Դրամ	1	400 000	400 000
12.8	Ադմինիստրատիվ անձնակազմ	Դրամ	1	2 000 000	2 000 000
12.9	Ռճաբան	Դրամ	1	500 000	500 000
12.10	Վարսահարդար և դիմահարդար	Դրամ	1	500 000	500 000
12.11	Պարային խումբ	Դրամ	1	2 500 000	2 500 000
13	Երաժշտական մասի ապահովում	Դրամ	1	12 100 000	12 100 000
14	Բաներների դիզայն, տպագրություն և տեղադրում	Դրամ	1	2 200 000	2 200 000
15	Հրավիրատոմսերի տպագրություն /1200 անձի համար/	Հատ	1200	2000	2 400 000
16	Բեյջերի տպագրություն /70 անձի համար/	Հատ	70	2 000	140 000
17	Մրցանակների պատրաստում /13 անձի համար/	Հատ	13	75 000	975 000
18	Թարգմանչական խցիկներ և դրանց գործարկման համար անհրաժեշտ սարքավորումների տեղադրում և սպասարկում	Դրամ	1	150 000	150 000
19	Մրցանակաբաշխության ընթացքում թարգմանչական ականջակալների ապահովում՝ առնվազն 50 անձի համար	Դրամ	1	80 000	80 000
20	Համաժամանակյա թարգմանություն՝ հայերենից անգլերեն	Դրամ	1	120 000	120 000
21	Տրանսպորտային ծառայություններ	Դրամ	1	600 000	600 000
22	Մրցանակաբաշխության անցկացման ընթացքում, ինչպես նաև մրցանակաբաշխության ավարտից հետո հիմնական տարածքի մաքրության ապահովում	Դրամ	1	400 000	400 000
23	Մրցանակաբաշխության անցկացման շրջանակներում պահնորդական /անվտանգության ծառայությունների ապահովում	Դրամ	1	350 000	350 000
24	Շտապօգնության ծառայությունների ապահովում	Դրամ	1	100 000	100 000

25	Տեխնիկական սպասարկման ապահովում	Դրամ	1	3 000 000	3 000 000
26	Մոնտաժման և ապամոնտաժման աշխատանքների կազմակերպում՝ ներառյալ անհրաժեշտ բանվորական ծառայությունները	Դրամ	1	1 500 000	1 500 000
27	Միջոցառման անցկացման շրջանակներում հյուրընկալների ապահովում /առնվազն 10 հյուրընկալ/	անձ	10	60 000	600 000
28	Միջոցառման տարածքում մեքենաների անխոչընդոտ երթևեկման և կայանման ապահովում	Դրամ	1	120 000	120 000
29	Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի վարձակալություն	Դրամ	1	5 000 000	5 000 000
30	Այլ չնախատեսված ծախսեր				1 500 000
31	Հոնորար				5 000 000
	Ընդամենը				125 000 000
	ԱԱՀ				25 000 000
	Ընդամենը				150 000 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Հանրապետության հր.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011053502
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 16600047182001 00
ՀՎՀՀ 00167818

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 2
«01» 07 2024թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ
դրամ

Ծառայության														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդ ամե նը
1	79951100/3	Միջոցառման կազմակերպման ծառայություններ	-	-	-	-	-	-	-	-	-	-	-	150 000 000	150 000 000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
***Վճարումներն իրականացվելու են փաստացի մատուցված ծառայությունների դիմաց՝ համաձայն գնային առաջարկի բացվածքի (Հավելված 1.2):*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վարչապետի աշխատակազմ
Ք.Երևան, Հանրապետության հր.,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011053502
ՀՎՀՀ 02505554

(ստորագրություն) Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Ֆակտորի փրոդաքշն» ՍՊԸ
ք. Երևան, ք. Երևան, Սասնա Ծռեր 2/198
«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1660004718200100
ՀՎՀՀ 00167818

(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված 3
« » 2024թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1

« » 2024թ. կնքված
ՀՀՎԱ-ԲՄԽԾՁԲ-24/3-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն